է տալիս, թէ այն մարդը, որ ճգնաւրուական կեանքը յանձն ա-
ռառ և աշխարհքից ուրացէլ էր, և եթը որ առաջին անդամ գայ-
թակզութեան ենթարկուեցաւ, նա ասպացուց իւր այդ առաջին
փորձով, որ վատ ճգնաւրու է եղել, ապա թէ ոչ, նա ալէտք է

կարողանար համարձակ մտնել աշխարհքի մէջ («Ես քո ստեղծած», ալպինքն աշխարհքի մէջ և աշխարհքի համար), և մտնել իւր առաքինութեան զարդով, որից որ խկապէս մեցէ էր: Մանուկը հէնց այն պէտք է հասկանայ, թէ Ճգնաւորը՝ առդէն անսալատ եղած ժամանակ՝ արտաքուստ Ճգնաւոր (առաքինի) էր և ոչ թէ սրտով, ուստի և այդ պատճառով մոլորուեցաւ: Նա չը պէտք է կարծէ, թէ աշխարհքը մի անտանելի բան է, որից որ յամենայն գէպս փախչել պէտք է: Նա պէտք է իմանայ, թէ ամենայն մարդ իւր կեանքում բազմաթիւ և անակնկալ գայթակղութեանների կը հանդիպէ, ուստի սրտի գօրութեամբ պատրաստ պէտք է լինի նոցա դիմագրելու, և եթէ մի անգամ չը յաջողի՝ միւս անգամ փորձէ (մեղայ գայ), մինչև որ յաղթութիւն տանէ: Ժողովուրդը գայթակղութեանը կոչում է «սատանայ», բարոյական կո-իւր «ազօթելո», միւս անգամ փորձ փորձելլ «մեղայ գալո», առաքինի մարդուն «Ճգնաւոր»... և եթէ մանուկն էլ արդ գաղափարները այդպիսի խօսքերով է արտացայտում, դեռ չը պէտք է ըռնարարել և մերժել նորան: Արդ յայտնի է, որ ուրեմն տեսակ ուսուցիչներ էլ կան, որոնց մազերը բիզ բիզ են կանգնում այդպիսի խօսքեր լսելով, և արգելում են մանուկներին նոյնը գործածելու. բայց անտարակոյս այս էլ առաջնի չափ ծայրագեղութիւն և վիճակար է: Ամենայն հասակ իւրեան յատուկ խորհելու եղանակ ունի, ուստի և անկարելի է, որ մանուկը սիելօք հասակարների խելքով դատէ և մտածէ: Ամենամեծ զգուշութիւն պէտք է բանեցնել բարձր գաղափարներ մատակարարելու ժամանակ, բայց նախ և առաջ հարկաւոր չէ շտապել և մանկան ընութիւնը բռնադրուել:

|| Անապատ և բուսաբեր տեղի, չենք շնութիւն, ձեռագրութիւն և տպագրութիւն, արձաթ, ոսկի, երկալ (բաժկի, գէնք), ծառերի օգուտ (քթոց):

ԳՐԵԼՈՒ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՄԵՆՔ շատ անգամ փորձել ենք հարեւանցի կերպով հասկացնել մանուկներին, թէ գրականական լեզուն աւելի որոշութիւն և ճշդութիւն է պահանջում: Այս անգամ կը փորձենք մեր հատուածի առաջին մասը ամբողջութեամբ գրականի դարձնել, պակասը լրացնելով:

Օթինակը հանառոտիւ բերելու համար՝ 1) ոտանաւորի այն

բառերը, որ անփոփոխ պէտք է մնան, մենք նոցա առաջին տառով կը ծանուցանենք, 2) այն բառերը, որ բոլորովին պակասում են, փակագծի մէջ կը դնենք, 3) իսկ գաւառականի թարգմանութիւնը ամբողջութեամբ կը նշանակենք, 4) բառերի գասաւորութեան շարքն էլ փոփոխութեան է կարօտ, բայց այդ թողնում ենք որ ինքը ուսուցիչն անէ:

Մ. փոքրիկ հասակ մ. կ. գ. կ.—(որ) ա. մ. հ. է.—օրէնք կ. մ. կ. կ.—(նորա) կ. աղքատներին բ. կ.—(նա) մերկ մ. հ. է. կ.—բ. ո. փ. է. ք.—(կ) ե. պ. է. շ.—(նա) ե. է. գ. գ.—(կ) ե. է. կ.—(կ) մինչեւ երեկոյ ա. (էլ) ա.

Եթէ ուսուցիչը հարկաւոր և հնարաւոր համարէ, կարող է այսպէս շարունակել տալ մինչեւ մերջ: Ի հարկէ աշակերտները ոչ միայն պէտք է ասեն, այլ և ասածը գրեն ամբողջութեամբ, թէպէսու մաս մաս նախադասութիւններով:

— Քերականական վարժութիւնները շարունակել նախընթաց հատուածների օրինակով:

ԿԱՐԴԱԼՈՒ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Համապատասխան հասուածը կարդալ:

ՄՆԱՅՈՐԴ

(12—17 պատմութիւններ):

Մինչեւ այս տեղ մենք ասացինք այն ամենը, ինչ որ ասելու ունինք թէ ի՞նչպէս պէտք է գործածուին մանուկների «պատմութեանց» և ընթերցանութեանց, հասուածները, եթէ մնացորդ պատմութիւնների համար ևս բացատրութիւնները շարունակենք, մենք ստիպուած կը լինինք կը կնուութիւններ անել, որ աւելորդ է: Խօսելու, գըելու և կարդալու վարժութիւնները գրեթէ նոյնը պէտք է լինին այսուհետեւ, ինչ որ վերջերում պահանջեցինք: — Միայն «ընթերցանութեան», հասուածները էլ այնպէս ընդարձակ չեն շարադրուած, ինչպէս նախընթացները այլ այսուհետեւ պէտք է կարդացուին աւելի նոյն ինքն «պատմական» պահանջանակ չեն առաջարկուած:

մութեան, Հաստուածները, որոնք մինչեւ այժմ խիստ բաժանուած էին, «ընթեցանութեան», Հաստուածներից: Այս փոփոխութեամբ ընականապէս «Խօսելու» վարժութիւնն էլ փոքր ենչ պէտք է փոփոխաւ: Խօսելու վարժութիւնը էլ աշնապէս ընդարձակ չը պէտք է լինի, որ մանուկները պատմութիւնը «բերան առնեն», և ուրեմն նոյնը կարգալով Հաճութիւն չ'զգան: մանաւանդ, որ այս հնարաւոր էլ չէ, որովհետեւ այսուհետեւ պատմութիւնները շատ երկար են և ուստաւորի ձև չ'ունին, որ հեշտ ըմբռնելու դառնան:

Բայց օրովհետեւ մինչեւ այս տեղ կարդալու ժամանակ մանուկները կիսավանկերը զեղուած չ'են տեսնում, այլ լրիւ (ո-ո), պատմութիւնների մէջ կը պատահին նոյս, որ աստղանիշերով էլ աշքի են ընկնում: Այդ կարդալը մի նոր կը թութիւն է մանկանց Համար, որոնց Համար Հարկաւոր վարժութիւններ տուել ենք Համապատասխան «ընթերցանութեան» Հաստուածներում:

Պատմութեանց ըովանդակութիւնը ենքն ըստ ենքեան շատ պարզ են, բայց և այնպէս այդ մասին ևս մի քանի ակնարկութիւններ ենք տուել Համապատասխան «ընթերց»՝ Հաստուածներում: —

Որպէս զի էլ չը մոռանանք, այս տեղ հարկ ենք Համարում ցիշել, թէ եթէ և մանուկները բարձաւայնների անունները չը գետեն մեզ յայտնի պատճառով, բայց այտուհետեւ նոքա պէտք է սովորեն արդ, եթ որդին կարգալ սովորել են, և տարուաց վերջը մանաւանդ մենք անհրաժեշտ ենք Համարում, որ մանուկները այբ-ըեն-գին-դան կարգով իմանան:

— Նատ նշանաւոր է այն խնդիրը, թէ արդեօք բոլոր 17 պատմութիւնները այնպէս մանրամասն պէտք է անցնել, ինչպէս մինչեւ այժմ անցանք, թէ կարելի է նոյսնից մի քանիսը բաց թողնել:

Մենք կարծում ենք, որ բոլոր մանրամասն անցնելու Համար ոչ ժամանակ կը լինի, ոչ էլ հարկաւոր է: — Պէտք է շատ հիմնաւոր կերպով անցնել առաջին 11 պատմութիւնները: Բայց քանի աշակերտները առաջ գնան կը գետանց վարժութիւններով, ուսուցին այնքան աւելի կը նկատէ, թէ աշակերտներն սկսում են աւելի և աւելի զգալի կերպով երկու տարբեր խմբերի բաժանուել: Ումանք, բանի էութիւնը, լաւ ըմբռնելով, շուտ առաջ են գնում, միւսները կաղէ կաղ է տեսն մնում: Այս կարգ

է շատ պատճառութիւններով: Եթեան գալ: Կամ աշակերտը երկրորդ տարին է մնացնել նոյն դասառան մէջ *), կամ ուսումնարան մտնելու ժամանակ արդէն այլ եղանակով կցկութը բան սովորած մտաւ, կամ շատ անդամ գուցէ և ուսուցչի անփութութիւնը: Նիշ և եցէ չարեքն արդէն չի ծածկվում և չառաջադէն աշակերտների համար մեծ տանջանք է կաղերի հետ կաղալ, որ և անհամբերութեամբ եւրեանց գժուհութիւնը շատ ակամաց չափութիւններով և խանգարմունքներով կը լայտնեն: Որովհետու ենչպէս Հասակաւորի համար, նոյնպէս և փոքրեցի համար անտանելի և ձանձրալի է լսել այն բանը, այն ևս երկար միջոցով, ինչ որ հետաքրքիր չէ: — Այս չարեաց առաջն առնելու համար միակ միջոցն է ամենայն հնար գործ դնել, որ գառատան մէջ չը նկատուելի, թէ գործը բարերար է առաջ գնում: Աչա այս նպատակին կարող են ծառայել մեր մենացորդ պատմութիւնները: Նթէ ընթերցողը լաւ ըմբռնեց մեր բացատրութիւնները, նա կը նկատէր, թէ մի որ և եցէ նոր վարժութիւն անպատճառ ոչ միայն այն պատմութեան մէջ կարելի է վարժեցնել, ուր որ մենք ենք մտցրել, այլ ուրեմն պատմութեանց մէջ ևս, ուր որ կամենանք մենք: Ուրեմն եթէ զանգաղութիւնը նկատելի է լինում արդէն մինչեւ 12-երրորդ պատմութեան սկսիլը, այն պատճառով որ մի և նոյն պատմութիւնը շատ երկարում է թոյլերը զեռ ևս չը վարժուած լինելով, այն ժամանակ կարելի է ուղղակի 12-դպատմութիւնը մէջը մացնել կը բարձր վարժութիւններով, որոնցից հետաքրքիր կարող են կարգացնել առաջ զգացակերպներին, զոր օք. թողլ թոյլը պատմէ, ևսկ չառաջադէմը կարդաց, կամ չառաջադէմը 5 տող կարդաց, ևսկ թոյլը 1 տող (այսքանին անհամբերը կը Համբերէ): Բայց այդ 1 տողում թոյլը այն վարժութիւնները պէտք է անէ, որի մէջ որ նա կաղում էր: — Այսպէս ընթացած ուսումը տարբուաց վերջը այս արդէնները պէտք է պատկերացնէ. բոլոր պատմութիւնների բովանդակութիւնը բայց աշակերտներին չէ, ևսկ ենչ որ չառաջադէմը կարգացել է, այն բոլորը թոյլը չէ կարդաց և եւ

*) Մենք ամենալուրջ կերպով խորհուրդ ենք տալիս առաջն բաժնի գասառան մէջ մանուկին ենուա տարի չը թուղն ել եթէ միայն հնար կայտ եւ այս գժուար չէ կատարել՝ քանի որ երկրորդ բաժնի շարունակութիւնը նոր գժուարութիւններ չը պէտք է պատճառնեն:

բաց վերջ և վերջոց սա էլ այն ըուլոր վարժութեւնները
առել է, ինչ որ բացատրութիւնները պահանջում են: — Այսպիսի
ուսումը բաւական բաղադրեալ գործ է ուսուցչի համար, բայց
մտածող և օրտացաւ ուսուցչը շատ հեշտ կարող է գտնել մէ-
կին սահմահարելու և մեւսին առաջ քշելու չափն ու սահմանը:

Վերջապէս մէ նկատողութիւն եւս: Մենք պատմութիւններն
ընդունեցինք իբրև կենտրոն բոլոր ուսման: Մենք պահանջեցինք,
որ բնագիտութիւնը նոցա համեմատ առաջ գնան, մեշտ ակնար-
կութիւններ անելով, թէ որ պատմութեան մէջ մօտաւորապէս
ինչ բնագիտութեան նիւթ պէտք է աւանդել, նոյնն արեցինք և
նկարզութեան համար, իսկ թուաբանութեան (և երգեցողու-
թեան) համար շատ պնդել չէինք կարող, որովհետեւ գեռ դա-
սագրքեր չ'ունինք: Բայց և այսպէս ուսուցչը ինչպէս գիտէ
անպատճառ այդ ուսմունքներն էլ պէտք է ուսուցանէ: Մեր
պատմութիւնները կրօնական գաղափարներ ևս տալիս են, որոնք
նոյնական մեծ խնամքի են կարօտ ուսուցչի կողմէց: — Բայց այժմ
չեն ենթադրում ենք, ինչ որ ուրիշ տեղ էլ ասացինք, թէ ի՞նչ պատ-
մութիւնները չեն կենտրոն ուսման համար, ազ և նոյն իսկ
աշակերտի իրական կեանքը: Կեանքի անակնկալ ուրախու-
թիւնը, հարուածը, նոր տեսած բնութեան երեսովը, նոր նկա-
տած մարդկային արուեստը, գարունքի առաջին ծաղկեց, մէ որ և
եցի տօն, հանդէս, և այլն—սոքա բոլորեքանք առելի կուտան
թէ դասերի ժամանակ, թէ գուրսը՝ խաղի կամ զբունելու ժա-
մանակ՝ աշակերտների մտաւոր շրջանը լայնացնել Աստուծոյ,
բնութեան և մարդու մասին ծանօթութիւններով, և ուսուցչ
ու պատուհանութիւնն է այդ անել: — Թէ առաջին տա-
ստաց միջոցին այդ ծանօթութիւնները որոնք պէտք է լինին,
ահա 62 յօդուածով այդ էլ ցոյց ենք տալիս, աւելացնելով, որ
նոքա դասեր չեն, ազ միայն ակնարկութիւններ ուսուցչի համար,
որ խորհրդածէ, թէ ինչ բաների վերաց աշակերտի ուշագրութիւնը
պէտք է գարձնել տաչ: Այն տեղ կան շատ կարեռ և երկրորդա-
կան բաներ: Փորձառու ուսուցչը ընտրել կը կարողանայ հան-
գամանքներին համեմատ: Մենք ծրագրում ենք շրջանն ու սահ-

մանները, մէջը պէտք է յարմարուի ինքը ուսուցիչը՝ ինչպէս որ
ըարտոք դատէ: Երանի մեզ չը դատապարտեն, թէ քիչ ենք տուել
իսկ եթէ շատ ենք տուել: — ուսուցչը չի դժուարանայ աւելորդը
գուրս հանել:

ՊՐՊՐԱ ՈՒ ԸՆԴԳՐԱԿԱՌ ԹԱՅԱԺԱՍԱՅ

ԾՐԳԱՑՈՒՑԱՅ

ԾՐԳԱՑՈՒՑԱՅ

յու ամրակը՝ պահպանութեան վայրունակ չ պահի առջև պահանձնան
աւանս գով չեւ չեց բանականութ չ ան վայրուն չափաց զայդաց
պայուն աւ շամանաւեք չէ պահպան-չեւառ գով մայ մեջ ի այ
չ մասք ոչ ուր

Ա.ՍՏՈՒԾՈՅ, ԲՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՐԴՈՒ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Պւսման առաջին տարեշրջանին:

Ա. ՌԽՈՒՄՆԱՐԱՆ

1. Ուսուցիչ և աշխարհութեան: Աշակերտների ընդունելութիւն. նոցա
տեղերի յատկացնելը, իմանալ անունն ու աղքանունը, հասակը,
ծնողական տան գերբը, ծնողների վիճակը, ևայլն:—Ուսումնաբան
գալու նախատակը: Ուսուցչի անունը, ընակարանը, դործը:

2. Աշխարհութեան նատեն, վեր կինան, գան, գնան (Ե՞րբ): Զեւսէ՝
աջը, ձախը, բարձր բռնել, ձեր բռնել, ծալած բռնել, առաջե
քաշել, սեղանի վերալ, սեղանի տակ, ցուցանատ, ցոց տալ,
տախտակ կամ ընթերցարան վեր առնել, առջեր գնել, սեղանի
տակ պահել, սրբէ՝ աջը, ձախը, գնալու, թռչելու վայելու, մէկ
ոտի վերալ խաղալու վարժութիւններ: Ուշտրութիւն՝ հանգեստ
նատել, լուել, լսել և նայել, պատասխանել, պատմել, երգել,
աղօթել, չը խօսել, չը լաւ, չը կռուել, չը խմիել, ևայլն:

3. Ուսումնաբանի իրէք, անունը, թիւը, տեղը, ոմանց նաև
գոյնը, ձեւը, գործածութիւնը:

4. Գուստ: Ո՞ստեղ, ձեւը, շեմք, կողպէք, բանալի, դաստապան,
ծղմնել, կաթը, ենչից է շնած, ո՞վ է շնել, գոյնը: Բաց անել
փակել: Մտիր, դուքս գնա: Բարձրութիւնը, լայնութիւնը: Չա-
փելու վարժութիւն:

5. Պարուակն: Ո՞ր տեղ, ձեւը, ապակիներ՝ թափանցիկ, պայ-
ծառ, փացուն, քառանկիւն, բարակ, փշուող: Մի կտորեք: Ե՞ր-
բաց անել, ենչո՞ւ: Թափանցիկ օդ, լոյս, փարագոյր, վեղիկը:
Քանի՞ պատուհան (քանի ապակի):—Չափելու վարժութիւն:

6. Վաստին: Ո՞ստեղ, ձեւը, գոյնը: Ինչից է (երկաթ, կաւ,
ևայլն): Խողովակ: Տաքացնելու համար՝ փայտ, ևայլն, գարսել,
վառել, կապաւ, վառվում է, արցվում է, բաց է արձակում, մոխրը,
ծուխ, միխ մուր, ջերմութիւն, կապաւ: Զգոյշ եղիս:

7. Պարեր: Ո՞ւրան: Սենեակ՝ երկարութիւն, լայնութիւն,
քառանկիւն, ևայլն: Ուզգահայեաց, առաստաղ և ցատակ պառ-
կած (Հոթելոնական): Անկիւններ: Քարուկը: Ներկած (ինչ նիւ-
թով, գոյնով, ո՞ւմ ձեռքով): կամ թղթած: Հաստութիւն: Ի՞նչ է
կախ տուած պատի վերայ, ի՞նչ է կանգնած նորա մօտ:—Չափե-
լու վարժութիւն:

8. Այսպէս էլ սեղաներ, աթոռներ, նստարան-
ներ, մեծ տախտակ. կաւէ:

9. Գիրս (այբբենարան): Ո՞վ ունի գարեք, ամեն մէկը ո՞ւրան:
Դասարաննական առարկայ է: 4 անկիւն, կազմ, մէջը, հաստ կամ
բարակ, թղթել կամ ծանրը: Թերթեր երկու երեսներով և համար-
ներով, թերթել, բաց անել, ծածկել (առանց ճկատելու), մաքու-
պահել, չ'աղտոտել (ինչով): Տպագրող, կազմաբար: Թղթեց, պատու-
րամթղթեց, կաշուրեց, կտուեց:

10. Ուսումնաբան: Կողմերը (հիւսիս, հարաւ, ևայլն). գուներ և
պատուհաններ (ո՞ւրեղ և ո՞ւրան), տանիք, ծինելոցզներ, ևայլն:
Մուտք ու անցքեր, սամնդուխ (յարկեր): Դասամուն, ևայլն, գա-
մեթ (հրապարակ), ո՞ր կողմեց, ենչո՞վ պատած է, ունի՞ ծառեր:
Ուտաձաննապարհ, մաքուր պահել:

11. Ուսումնաբանի կտոր: Ի՞նչ ենք անում ուսումնաբանում:
Ի՞նչպէս պէտք է լինենք ուսումնաբանում: Ե՞րբ է սկսվում ու-
սումնը ամենայն օր և ե՞րբ վերջանում: Բ՞նչ ենք անում ուսման
միջոցեց սուած և յետոյ: (Տան մէջ և գուրսը):

12. Խոտը և խոռոչներ: Նախ աշխատութիւն, ապա զուար-
չութիւն, աշխատել, նատել, ման գալ, վազել, թռչել, պար գալ,
մարմնամարզութիւն անել: Ի՞նչ խաղեր էք խաղում: Ի՞նչպէս, ո՞ւր-
քը էք խաղում:—Խաղալիքներ՝ ըզզան (կրնաձև), մտրակ, գնտակ
(ըսլորակ գնտակաձև, առանգական, թղթեց), փոռան, (գաւա-
զնել) ձեր, փող, թմբուկ, սուր, պաճուճապատանք, քարեր,
աւազ, աղիւսիկները արկղիկ, այլն: Ո՞ր խաղերով մանուկները
հասակաւորներին նմանել են կրտսում: Ի՞նչ պատկերներ ունիք:
Նկարութիւն:

Բ. ՄՆՈՂԱԿԱՆ ՏՈՒՆ

13. Տան արդատին և ներքին հասեր (Նոյնը, ինչ որ 10 շարօնմունք, և բացի այն) Ռւսականարանից նըքան հեռու է: Քաղաքացու և գիւղացու տուն: Սենեակի մէջ Ե՞նչ կահ կարասիք կայ: Ննջա-
րան, խոհանոց, նկուղ: Գաւթի մէջ՝ աւազան, ջրհոր, լուացարան,
ախոռ, աղբնոց:

14. Տան պատմութեան: Ո՞վ է շինել տուել այս տունը, ո՞վքեր
շինեցին: Նինութեան նիւթեը՝ ո՞վպիսի, ո՞վ տեղեց, Ե՞նչակիս
ըերուեցան: Ի՞նչ գործ ունի որմնադիքը, հիւանը, դարբինը, ա-
պակիքործը: Հիմք, պատ, շինութեան ուղղութիւնը (ի՞նչ գոր-
ծիքով), պատ քսելը, ներկելը, ևայլն. չորացնել, ընակել: Փոթու-
կի վնասը. կարկատանքը: Հին տները քանդում են:

15. Մի հրեհ, Հինն էլ նորն էլ կարող է այրուել. Հըդեհի
ծագումը. Հեշտ վառելի նիւթեր: Բոց, ծուխ, օդի ապականու-
թեւն. Եղիւղ, սարսափ, յուսահատութիւն և լացուկոծ. Հանգ-
ցնելու փորձեր. Հօաշչջ միջոցներ և մեքենաներ. տան մէջ ի՞նչ
կարող է այրուել. մեծ կորուստ (ապահովութիւն). նոր շինութիւն:

16. Ուրեւ և իմեւ Ի՞նչպիսի բաներ կարելի է ուտել. (կերա-
կուրներ), Ե՞նչպիսի—խմել (խմէքներ): Որոնք հում, որոնք ե-
փած կամ խորոված են ուտիում: Ո՞ր տեղից ենք ստանում: Ո՞վ
է պատրաստում: Ե՞րեւ և ո՞ւր ենք ուտում, նմանապէս աղօթում
և շնորհակալութիւն մատուցանում: Ինչո՞ւ Համար պէտք է
ուտենք: Զափաւոր և զգոյշ:

17. Մի տակ հերաւուր և իմեւ: Հաց, ցորենից (էլ
ինչից): Ի՞նչ տեսակ հացեր յայտնի են քեզ. ո՞րտեղ է թխվում
ալիւրեց, կաթեց, եղեց, ջրեց, նաև շաքարեց կամ մեղքեց: Ո՞ր
տեղեց է ալիւրը: Աստուած օրհնում է մեր գաշտերը (ի՞նչպէս).
գիւղացին, ջաղացպանը, Հացթուխը հոգում են մեզ ամենուս հա-
մար: Իւզ և պաներ՝ ո՞ր տեղեց, կաթեց են շինվում: Իւզը աւելի
փափուկ և զեղին է պանթեց: Կալ՝ սպիտակ, Հեղուկ, քաղցր, նոսքը
ևայլն. ո՞ր տեղեց, Ե՞նչ բանի է ծառայում: Մի՛ մըպիսի, Ե՞նչ
տեսակ է, Ե՞նչպէս է պատրաստվում: Ի՞նչ պատող և բանջարե-
զէն դիտես, էլ ի՞նչ տեսակ խմելիքներ:

18. Հագուստ: Ի՞նչ Հացուստներ ունիս, մըն ես Հանում
քեզանից՝ երբ ուսումնաբան ես զալի: Ողջունելու ժամանակ
ի՞նչ ես Հանում. քաղաքավարի եղիր: Հագնել, Հանել, մաքրել:
Ո՞վ է շինում. ձեւել, կտրել, կարել, գործել, կարկատել: Հագուս-

տըն Ե՞նչի Համար է: Փափուկ, տաք, բարակ, հաստ: Ո՞րն է սպի-
տակ, սկ, կապոյտ, կարմիր, ևայլն: Ի՞նչ նիւթիցն են: Չոր-
մատանի, օդ, շղթայ, ապարանջան, քորոց. սուտ մաղեր. ձեռք
փայտ, ևայլն:

19. Դասէ: Կոթ (նիւթ), կտրեց, ծազը, մէջք, սուր, ըռութ,
սրած, փայլուն, ժանդուած, հին, ևայլն: Ի՞նչ բանի է գործ-
ածվում: Կտրում, ծակում է. զգոյշ: Զմելի, ածելի, սեղանի,
խոհանոցի, սպանդագործի դանակ:

20. Հայելէ: Մեծ և փոքր: Երջանակ, կոճակ կախ անելու Համար:
Սպակին երկարաձեւ, քառանկիւն, ձուաձեւ, հաստ. ողորկ, տափակ,
փայլուն. մէջքի կողմը անագով ծածկուած, որ սնդիկով [թըջուած
է]: Հայելու մէջ տեսնում ենք նորա առաջ եղած իշերի պատկե-
րը: Կանգնիր շատ մօտ, հեռու Հայելուց, թնչեր ես տեսնում: —
Զուրն ու մետաղները նմանապէս ցոլացնում են Հայելու պէս:

21. Այսպէս է՝ ժամացոյց, լապտեր:

22. Ընդունիք: Հայրս և մայրս իմ ծնողներն են: Որդիք՝ տղայ,
աղջիկ, եղբայր, քոյզ (Հարազատ արենակիցք), թիւ և հասակ նոցա:
Մանուկ—պատանի—արփահասակ (մարդ)՝ ծեր. աղջիկ—օրիորդ—
կին—պառաւ: Ազգականք՝ մեծ հայր կամ պապ, մամ, հօրեղ-
բայր, թոռ, խնամի, ևայլն: Կնքահայր, սան, սանահայր, սա-
նամարը: Մառացք, մշակներ:

23. Ընդունիք պատմութեան: Մարդ և կին ամուսնանում են, Հա-
սանիք, ծնունդ և մկրտութիւն մի մանուկի: Ի՞նչ են անում
ծնողները զաւակի Համար, Ե՞նչ—ծառաները: Մէրը սէր է ծնում:
Մանուկները պէտք է սիրեն իւրեանց ծնողաց, ծառացն և լսեն
նոցա. սովորեն և աշխատեն (Ե՞նչ): Ուսումնաբան յաճախել
եկեղեցի գնալ, ևայլն: Առողջութիւն—Հիւաննդութիւն. մաշ,
թաղում, սուր, այբեր և որբ, աղքատութիւն—Հարստութիւն,
մուրացկանութիւն: Մարդամէր, գթասիրտ, կարեկից, խաղաղամիտ,
քարեսիրտ, Համելի եղիր (որմնեց). Աստուծոյ երկիւղ ուսնեցէք, որ
(ծնողների մէջնորդութեամբ) ձեզ պահում պահպանում է:

Գ. ՄԱՐԴ ԵՒ ԱՆԱՍՈՒԻՆ

24. Մարդու հորինք: Աշակերտները, ուսուցեցը, ևայլն մարդիկ
են: Մարդն ունի գլուխ, երան և անդամներ: —Գյուփ՝ Ե՞նչ մասեր
ես նկատում գլխի վերայ, առջեկեց, յետեկեց, վերևեց, կողքերեց:
Գէմք՝ Ճակատ, աչքեր, քեթ—նոցա ձևն ու գերքը: Գանգքը ըս-

լրակ, գնդակաձեւ, կարծը է. մազը փափուկ, երկար, կտրած, հիւսած, գրղչ, ոև, շէկ, ևացն. միթուք(մի), ծնօտ, ականջներ. պարանոց:

25. Խոռն: Վեզ, կուրծք, մէջք, կողքեր, ուսեր, թիկունք, ողնաշար, կողեր, փոր, սիրտ, թոք, սոսամոքս, վորոտիք, արիւն, երակի զարկ, երակներ. ուսկորներ, միս, մորթի—գոյն, պիտումիւն, դիրք ևալլն:

26. Ասութեր: Ձեռքեր և ուսքեր: Թէ, բազուկ, ձեռք՝ ավտով, մատներով (անուններ) և եղունգներով. յօդուածներ: Ձեռքերով թնչ կարող եմ անել: Ոտքի վերին մաս, ոլոք, ծունկ. ոտք՝ ներքանայի ուռուցքով, պէտեղներով—թիւ, դիրք և ուրիշ յատկութիւններ: Ի՞նչ եմ անում ոտքով:

27. Ոչ և այսից: Ո՞ր տեղ, թնչովէս է: Աչքե խոռոշներ, ենձորը, կոպեր, արտևանունք, արտասուք, տեսութեան կէտը, եղերուամորթ. շարժողութիւն. տեսնել, շանալ, աթուն լինել, քնել, ակնարկել: Ականջի ևեցին, պատեան, կոճիկ, լսողութեան խողովակ, լոել, ականջ գնել, ձայն. խուլ ու մունչ: Գլախն ըր խփել, մազ չը պոկել: Ինչնի կարող ես քեզ վերք պատճառել, առողջութեանդ վնասել:

28. Կ՞անչ նորու ի՞րո՞ւ է լինել և լինել (ներշակութիւններ): Ծեր—երիտասարդ, մէծ—փոքր, գունատ—կարմիք, թուզ—ուժեղ (զօրեղ), գանդաղ—ճարպիկ, կոչը—խուլ—կաղ—առողջ—տիսուր. հարուստ—մէծատուն—խելօք—, բախտաւոր—, մաքուր—, արիասիք—, բարի— (չար, վատ), պարկեշտ—անպատկառ, աստուածապաշտ—անաստուած, ապնիւ—անազնիւ (գող, խափեփայ), աղնիւ—գուեշիկ:

29. Մորդու և անսունների յայներ: Մարդը կարող է խօսել (թնչ, ենչնի), կանչել, աղաղակել, երգել, փշել, ուշացնել (սուլել), ծիծաղել, լալ (ինչնի), հազար, փռշտալ, եացն: Ո՞ր անասունները կարող են նոյնը: Ո՞ր անասունները բառաշում են, մայում են, բգում են, հաջում են, լաջում են, խըսրում են, խըսնջում են, քարքացում են, մլաւում են, զրդում, կռկուում են, ճիճկում են, երգում են, թշում են, սուլում են, մկուում են, ճլմում են, զալլացի են ասում: Այս ձախներից մօքպարզ, խուլ է: Ո՞ր կենդանիք անձախ են:

30. Մորդու և անսունների շրջողաբեկութ: Մարդն ու կենդանին պարում և շարժվում են կամաւ (իսկ բայսերն ու քարթը): Մարդը քալում է (կանդնում, պառկում, նստում է), վաղում, ոստում

է, կախ է մնում. ելնում, իջնում է, հաւասարակուութիւնը կրօցնում, ընկնում, և դարձեալ վեր է կենում, գառնում է, պտում է, լսուարհում, ծովում է աջ ձախ յետե, վլուխը դարձնում է ամենայն կողմ, լորում է, զարիւմ է, ձգում է, շուռ է տալիս, գլորում է, ևացն: —Ո՞ր անասունները ոստիւն են անում, թուզում են, թուչում են, սողում են, լորում են, ջրասույզ են մենում, ևացն:

31. Ճնշուած: Քանի ոտ ունի ճնշուակը: Քանի ճանկեր իւրաքանչիւր, երկու ոտի վերաբ: Ուր և թնչպէս է նորա կտուցը, վիետուքները: Ի՞նչպէս է շարժվում, խօսում: Ուր է շնում եւը ըունը. ինչցից և թնչպէս է շնում: Ի՞նչ է ուտում: Համարձակ է, ձմեռը մինչեւ մեր գաւեթն է մտնում (ինչնւ): Տուր նորան կարեկցութիւնից կերակուր: Ամառը վինտուում է նաև թթթուք, որդէզ:

32. Կորու: Ո՞րպիսի ընտանի կենդանիք յայտնի են ձեզ: Կատուի գլխաւոր մասերը: Կատուի գլուխը շօավող մազերով (մւլ), վոքը ականջներ, վայրուն աշքեր (թշկաձե ըբակ): Փափուկ, տաք մորթի: Թաթեկները չորս ճանկերով, որ յետ քաշուել և ծածկուել կարող են: Չար և նենդ է, բայց թողնում է, որ շփեն, և այն ժամանակ ամենայն մտերմութեամբ խիսրում և մլաւում է, մաքսիւմ է (թնչպէս). նորա գնացքը զգոյշ և անլուք է, մթութեան մէջ լաւ է տեսնում. լաւ մագլցում և ոստնում է. միներին (ինչ անում և թնչպէս), դողանում է (ինչ):

33. Աւաղու: Թիւչուն: Գլխաւոր մասեր: Գոյն: Գլուխ կտուցով, թափով, վզի օձեքներով (միբուքով). վիետուքները ծածկոց վիետուքներ, արբի վիետուքներ, թուչելու վիետուքներ (մւլ): Ուր պեր առջեկ և յետեկ ճանկերով: Ուր եղջեւը կոռւանչը, աքաղների կուիւ. ազաղակում է (թնչ). արթուն է, հաւերին եւը մօտ է գրաւում և պաշտպանում է: Կրակուր, ձուեր (տալիս է:)

34. Հաւ: Գլուխ, երան, անդաններ, կառց, վիետուքներ, թեւեր, աքիւ և ճանկեր (քանի): Մեծութիւն: Փետութները ըմբակ և խողովակով. մէծ և փոքր վիետուքներ. գորշախայտ բծերով: Ջերով քթթուածում փորում է (մւլ տեղ, ինչնու): Ի՞նչ է փնտուում և ուտում: Զու է ածում, կռկուում է, աղաղակում է, թխուում է: Հաւատուն, թառ, բուն: Զագեր (վառեկներ): Մորթում, փռթիւմ են, եփում են:

35. Զու (Հաւեր): Երկար բոլորակ, սրածայք, սպիտակ, կարծը,

կոտրուող կեղև, սպիտակոցը հեղուկ, փայլուն. դեղնուկը գնտաձեւ է (մւր է): Հում, խաշած ձու (կատկի նշան), ուտում ենք: — Ինչ բաներ ձուածեւ են:

36. Մուտ: Ամենափոքը կաթնասունն է: Գլխաւոր մասեր: Սրածացը դունչ, երկար պոչ, տուր: Հոտոտելիք ունի (բնչ քանի համար): Բնակում է ծակերում: գիշերը դուրս է գալիս այն տեղից, կրծում է կերակուրները (բնչ), կտրուում է թուղթ և հագուստ (ինչնի): Արագաշարժ է: ոստնում և ծվճիռում է, չափազանց խստ բազմանում է: Ո՞վ և թնչպէս է ըռնում նորան:

37. Շահ: Գլուխ, իրան, ոտքեր (անդամներ): Գլուխ երկարացած, սրացած, դունչ, ատամներ, քիթ երկու ծակով, 2 աչք, 2 ականջ (մւր). վիզ, մէջք, փոք, պոչ, 4 ոտ մատներով և բութ ճանկերով: Մեծութիւն և գոյն. մազերը, գանգնեւու: թէ ուղիղ: Հաշում են, վազում են, ոստնում են, կծում են. թնչ է ուտում. բնչ քանի է ծառայում մէզ: Ո՞րպիսի չներ են չաշտնի քեզ: Շան հաւատարձութիւն՝ առած է:

38. Ոչիոր: Գլխաւոր մասեր շան պէս: Մաշեր չունի, այլ երկար, փափուկ, գանգուռ բուրդ, խուզել, նորա գոյն: Ոտքերն ու գլուխը մազուտ, ոտքի պէճեզներ: Պտուկներ (մւր), կաթ: Արու խոյ, էդ՝ մագի. դառ: Մայում են, հեղ, համըերոյ, չիմար են. արածում, ուտում են (բնչ): Հովիւ, խաշն: — Մորթում են, ևայլն: Ի՞նչ ենք շինում բրդից:

39. Գորդ: Աշնան դրթգրթում է (մւր): Ինչպէս է նստում ջրի մէջ: Լախն բերան, 2 մեծ աչք, բարակ մարմին. 4 ոտք, ցետեկնը երկար և լրջամաշիքը (ինչն համար): Կանաչագոյն, լրջունքալին, անմազ և անփետուր. մերկ: Գորտի ձուեր լրջունքի մէջ: Նորածին գորտերը լինչ կերպարանը ունին, յետոյ: Թռչկոտում և լողում են:

40. Կոբակիոյ (ձուկ): Կերպարանք. դլխաւոր մասեր: Գլուխ բերանով (ծնուռներով) և քիմուխտներով. լողակներ (մւր, ինչն): Պոչ. թեփ, թնչպէս են սոքա շարած: Գոյն: Ալքում է ջրի մէջ, լողում է, լողակներով թխաւարում է ամենախն կողմն ուղղահաշեաց և հորիզոնական ուղղութեամբ. աշխոյժ է, ուտում և խմում է. ձայն չունի: Օդի մէջ սատակում է. եփփում կամ տապակիքում է: Ի՞նչ ձկներ չաշտնի են ձեզ:

41. Մեղու: Գլուխ, կուրծք, վերջամարմին: Ծծելու կնճիթ, 2 շողափողք, 2 աչք. խայթոց վերջնամարմնի վերայ. խայթել:

4. մաշկէ թևեր՝ երակներով: Թռչում է (մւր) և բգում է. 6 ուազ (մրգան եւրաքանչիւր) կողմ, մարմնի մը մասի վերայ: Մեզուները բնակում են փեթակում, շինում են մեղք և մոմ. — Աշխատութեան օրինակ են:

42. Երանք ու (թթթուր): Երկար, փափուկ, շատ չոգերից կազմուած կենդանին է: Խւր շրթունքներով մանում է և հիւսում է երկար հիւսուածք պատանքի նման (բուռ): Ինքն էլ մէջն է մնում, այն աեղից մենք ստանում ենք մետաքս: Ալպում են սպիտակ թթի ծառերի տեղըներով: Եթե որ բնժուքը պատառում է, թթթուրը գառնում է թևաւոր միջատ՝ մեղուի պէս:

43. Անառաների հանուն: Ինչու է հարկաւոր մնունդը: Ի՞նչ են ուտում մեր ընտանի անսասունները, (գազանները), միները. թռչունները, թթթունները, ձկները, գորակերը, և որ տեղ են գտնում նորա եւրեանց կերպուրը: Ո՞ր անսասունները միայն բուսեղինով են կերպարվում. որմնք մսով: Ի՞նչպէս են ուտում նորքա: Ո՞վ է հոգս քաշում նոցա համար:

44. Անառաների բնական, Մարդու բնակարան՝ տաղավար, տուն, պալատ. — քաղանձաւ, վրան: Ո՞ր են բնակում մեր բնտանի անսասունները (մի առ մի անուանել), գազանները, թռչունները, գորակերը, ձկները, մեղունները, ևայլն: Ո՞ր անսասունները եւրեանց ըունը շինում են գետնի տակ, գետնի վերայ, անտառում, ծառերի և թթերի վերայ: Առ հասարակ թնչ բանի ծառայում է բնակարանը: Որմնք չեն շինում բնակարան եւրեանց համար: Որմնց համար մարդն է շինում:

Դ. ԱՄԱՌԸ *

45. Ծաղկներ և պէտներ: Պարտիկում, դաշտում, սարի վերայ, անտառում, ծառուղու վերայ, պատուհանում բնում են բոյսեր կամ տունկեր (ծառեր, թփեր, ծաղիկներ, խոտեր): Նոցանից մը յայտնի է ձեզ: Ի՞նչ ծաղիկ էք ըերեւ ձեզ հետ: Ցետ, բողուն, բաժակ, պսակ, առէշք, փոշուց թելեր: Գոյն, ձեւ (զանգակ, ձագար, ափսէ ևայլն), հոտ, տեղի բուսանելու: Փունջ, պսակ: — Տերեներ՝ կոթ,

* Մանուկները զանգանում են միայն ամառ. և ձմեռ, Զատկի տանով առանձին տպաւորել պէտք է տալ գատունքի գաղափառը, իսկ այգէկութով՝ աշունքի զաղափառը:

տեղևել եթես (սրտածե, ձուածե, զծակեցի), բոլորակեք (անթեռե,
ծծըպաւոր, սղոցած, փշոտ): Սաղալթ. ասեղնատերե: Նկարեցէք
մի տերե:

46. Հոռորդ և խորը: Հաղարձ՝ գնտածե, ողորկ, փայլուն,
փարձաշերտ, սպիտակ կամ կարմիր. Հիւթալից, աճում է ճութ
ճութ. Կոթ, ոստ, բուն, թուփ. թուփը շատ ցածր. կանաչ տե-
ռները: Խաղող՝ նման, բայց կանաչադոյն, ոչ այնպէս փայլուն,
աւելի երկար և ձուածե հատիկներ ունի, թուփը շատ աւելի
բարձր, մադլցում է և հաստատվում է իւր ըեղերդ: Ուրեն
բանում նոքա:

47. Կեռա և ժիշտ: Կեռաս՝ նախ կանաչ, ցեաոյ մուգ կարմիր,
փայլուն սեագոյն, ողորկ, գնտածե. թթուաշ քաղցր հիւթ. ըո-
լորակ կորիզ միջուկով. կոթի վերայ է բունում. ծաղկները նախ
սպիտակ են մինում. կեռասի ծառը բուն ունի, ձիւղեր, ոստեր,
սաղարձ, կոկոմները և տեղենները: Ծիռն՝ նոյն ցեղիցն է, բայց ա-
ւելի հաստ ու մեծ է, երկար ձուածե, տափակ, մէկ կողմից
ձեղքուածի պէս, մուգ գեղին է բծերով, կորիզը երկարածե, և
մետափափ պէս երս ունի. միջը կորիզաւոր է: Բուն Հայատա-
նի պտուղ է, ինչպէս և խալող:

48. Խնձոր և դաշ: Խնձոր՝ բոլորակածե, վերև և ներքեւ սղմած.
կճեպը կանաչ, կարմիր, մուգ կարմիր (թշեր): Մխար սպիտակ,
հիւթալից, թթուաշ քաղցր: Կտրել՝ միջուկի խոռոշ ու կուտերով:
Վերև ծաղկե, ներքեւ կոթ. ծառ: Տայչ բլղանի ձեռով, վերև բո-
լորածե, ներքեւ կոթի մօտ սրածացը. միւս մասերով խնձորի նման,
շաքարի պէս քաղցր: Երկուսն էլ վայր են ընկնում, հասնելու
ժամանակ, որթունք են ստանում, փտում կամ թառամում են,
և հում և եփած ուռում ենք: Համեմատիր խնձորի, տանձի,
կեռասի և ծերանի տերեները:

49. Ռուն: Արմատ (մը տեղ): Բուռն՝ ուղղահայեաց, բոլորակ,
հաստ կամ բարակ, կեղեւ ողորկ կամ խորդուերըտ. փայտ օղակնե-
րով. սղոցել, վայց ձգել: Սաղարձ՝ ձիւղեր, ոստեր, կոկոմներ,
տեղեններ (մը տեղ, թնչ տեսակ, երբ), ծաղկներ (նոյն հեց.)
պտուղներ (թնչ տեսակ), մեծութիւն, կարծրութիւն. փոթորկի,
ձմեռաշին և անառաջին ժամանակ: Ի՞նչ ծառեր են ձանազում.
ուր են ամենից մեծերը բուսած:

50. Անտառայ վերջ: Կէս օրին արեգակը ուր է կանգնած, ո՞ր
տեղ է ելանում և մայր մտնում: Երկար օրերը պակասում են.

Թռչունները էլ չեն երգում և ծաղկեները չեն ծաղկում: Էլ այն-
պէս տաք չէ, աւելի հով է: Խոս, միքա, ցորեն կը-վում են.
Էլ թնչ պէտք է կը-ուի: Մեր գնացած զօօանքներից, ամենամեծը
որոնք են:

51. Օր և գիշը: Արեգակը հրանիւթ գունա է, շատ : Հեռու,
մեծ է. երկում և ջերմացնում է խթ ճառագայթներով, արևել-
քում ելանում է. արշալուն. դառնում է օր, յուսաննում է: (բարի
լոյն). Ես այդ կարող եմ տեսնել: Առաւօտ է: Արեգակն առելի
բարձրանում է, մեղ մերձենում է—կէս օրից առաջ է, ամենա-
բարձր տեղն է հասնում, մեր գլխին է կանգնում—կէս օր է, իջ-
նում է—կէս օրից ցետոյ է. մայը է մտնում արևելուտքում—երե-
կոյ է. մթնանում է, խաւար է. հով, ցուրտ է—գիշեր է. յուս-
նեակն ու աստղեր երկում են. (միշտ): Օրերը երբ աւելի երկար
են, գիշերները երբ: Զարթնում ենք առաջօտեան. քնելու, ենք
գնում երեկոյեան. առաւօտեան և երեկոյեան աղօթք: Մարդիկ
և անսառներ քնում են. հասամն ու աքաղաղն է արթուն:

52. Ժամանուի բաժնուած: Ժամացացը չի ման գալիս, պէտք է
լարել, բանալիք. շիսկ շիսկ լսվում է: Մեծ նետը մի անգամ լրիւ
պտտում է մի ժամում, փոքրը մի անգամ 12 ժամում: Ո՞ր ժա-
մացցցները զարկում են: (1 ժմ.=60 րոպէ, 1 ըմ.=60 վայրկեան):
24 ժմ.=1 օր. 7 օր=1 շրթ. 4 շրթ.=1 ամիս (լուսնեակը մէկ
անգամ լրանում և նոր է. թնչ ձեւ ունի). 12 ամս.=1 տարի:
Նարաթուաց օրերը: Քանի տարեկան ես գու, իսկ դու (նըն է
ձննդեան օրդ): Առաւօտը երբ ես գնում ուսումնաբան, և այլն:

53. Գամէ և եղանակի բաժնուածնեան: Հովն ու քամին գգուն էմ,
բայց չեմ տեսնում. աներեւոյթ, շօշափելի. փշում է մեղմ, ուժով
մըթկայոց. ինչ պէտք է մինի հետևանքը: Երկնքի վերայ ամպեր
կուտակուած, խոնաւ և հով, ցետոյ պարզվում է և տաքանում:
Անձրեւ բոյսերին սննդում է, և այլն: Որոտումն ու փայլառակումն
(տարափ), ցող, մէգ, եղեամն, ձիւն: Ուր է գնում անձրեւ ջուըը:
Հաւաքուելով դառնում է աղբեւը (ջրհոր), առու, վտակ, գետ:
Ձկներ, ջրաղացներ, նաւեր: Ի՞նչպէս ենք պաշտպանվում անձ-
րեւ (տուն, անձրեւ հովանոց):

Զ. ԶՄԵՌԸ

54. ՉՅԵՒ: Յըերը շատ կալճանում էն, գեշեներ՝ Երկարս-
նում. արեգակը շատ ցած է կանգնած (մւը). շատ անգամ չենք
տեսնում նորան: Ծառերը տերեւաղութեա, մերկ. ցուբա, պարզկայ.
Ճին սպիտակ, կոյտ կոյտ, ցանքե ծածկոց: Սառուց՝ փայլուն,
ըարակ, թոլ, վտանգաւոր. Հաստ, պինդ, սահնակ. ձընագնտի,
Ճնէ խաղ: Մենեակի մէջ տաք է, վառարանը վառվում է, աշ-
խատութիւն, Հէքիաթներ, խաղ Ճքագով ձնեռուաց Երկար Երե-
կմերին: Շուտով օրերը կը տաքանան, կը պարզաւանան, կ'եր-
կարեն: գարունքը գալիս է. սառուցն ու ձիւնը Հալվում էն:

55. ՈՐՈՌԻ: Ե՞ր է սկսվում որսորդութիւնը, ինչի՞ Համար այդ
ժամանակ: Հրացան, վառօղ, որսկան չուն: Որսորդն ընկնում է
սար ու ծոր, դաշտ ու անտառ վնտուում է ջէրան, լոր, կաքաւ,
փասեան, աղուէս, գայլ, նազաւատակ՝ կամ ուտելու կամ մորթի
Համար. Հետամուտ է նոցա, լցնում է Հրացանը, սպատում է,
արձակում է, սպանում կամ քիսում է. շունը վնտուում և ըե-
րում է սպանած սրաց՝ որսորդը Հաւաքում է, Երեկոյեան դառ-
նում: է տուն:

56. Նոր պերի, Խնջին ենք ասում նոր տարի: Անցեալ տարին
լրացաւ անցաւ, սկսուեցաւ նորը: Այն սր տարին էր, այժմ մըն
է: Այս տօնը տօնում է ուսւմնարանն ու տունը: Ամենայն տան
մէջ պատրաստվում է սինիէ վերաց Գոշնա, ինձոր, չամիչ, շաքա-
րեղին, և լուսաւորգում է սինին մեղրամտմով, որպէս զի “քաղցը
պատուէք” և լուսաւոր լին է ձեր կեանքը: Ամենայն մանուկ
առաստ առաստ նուէրներ է ստանաւմ իւրեանց ծնողներից: Յիշե-
ցէք աղքատներին և գոհութիւն տուեցէք Աստծուն: Այս ժամա-
նակ պատ է և եկեղեցին էլ պատրաստվում է ամենամեծ տօնե-
րից մէկը տօնելու (Ե՞ր): Այն է Ցիուս մանուկի ծննդեան տօնը:
Եթե որ “զամբարափայլը” լոհք, իմացէք, որ այդ աւետումը չի-
շեցնում է, թէ ինչպէս Ցիուս սիրել է մանուկներին և օրինակ
է եղել ձեզ:

Է. ԱՍՏՈՒԹՅԱՇՏՈՒԹԻՒՆ

57. Մարդիկ կարող են ցորեն ցանել, հնձել, ալիւթ գարձել,
հաց շինել, լայց շին կարող ցորեն ստեղծել. Աստուած տալիս է
անձը և արեգակի ջերմութիւն և կեանքք ո՞ո ըդհաւած էնա սունդէց
ըոց, անասուն մարդ. մէնաւարու է: Նա ամենայն տեղ է և ամե-
նայն քան դիմէ, թէ ո՞ի ինչ է անում, արդեօք բաթի, թէ չար:

58. Ովկ է ասում մեղուն, թէ քո սեղանը ծաղկիների մէջ
պատրաստ է. ովկ է տալիս Ճնջուկին տաք փետուր, թիթեռ-
նիկն սիրուն թիեր: Աս տուած ամենու Համար և նա ամք
ունի: (Մեզ լինչ է շնորհում): Նա գմանատ հայ է իւր ամե-
նայն որոց համար, օգոստ է կարօտութեան և նեղութեան մէջ:

59. Աստուած մեզ ամենուն սիրում է իւր որոց պիշտ: Նա է
սէր: Մենք Աստծուն շինք տեսնում, իւր փոխարէն նա մեզ
տուել է Հայր և մայր. նորա ինձ սիրու են (ինչնի է երեւում). ևս
պիտք է երախորոշը լինեմ նոցա, պիտք է լին նոցա վաստութիւն
թղոնեմ, լաւութիւն անեմ, ոչ թէ պատմից վախենալով, ազ
նոցա և Աստծուն սիրելով: Աս պիտք է սիրեմ եղածօրա, քրոջս,
ամենա ամառ գուռն, նաև աղքատին և անբախտին, ոբերին:
Եթէ քիչէն սիրում եմ, ուրեմն Աստծուն ևս սիրում եմ:

60. Ով Աստուած է սիրում, պատվում է ծնողաց և ընկե-
րին սիրում է, նա բարեպար (լաւ մարդ է). Նա ոչ ոքին շարութիւն

*.) Հետեալ կը ճնճնական գաղափաները՝ մանկաց սրտերի մէջ հաստա-
տելու համար՝ անօգուտ է այնպէս պատրաստի մատակարարել լողոներին
ինչպէս որ զրուած են: Ընդհակասակ նորա ցոյց են տալիս միայն թէ
տարուայ ընթացքում հոգուրողէն ո՞պիտի և լինչ գաղափաներ պիտք է
ունենան մանուկները: Դէպէզ ծնում է զգացմոնիք և թողնում է անջըն-
ջել է տպաւոր ու թիւն մարդու սրտի մէջ: Ահա այդպիսի գէպքերի
վերայ մատնացոյց անելը՝ հետևեալ տողերի նպաստակն էր: — Խօհեմ ուսու-
ցելու կ'իմանայ, թէ այն՝ ինչ որ մէկ յօդուածի մէջ է ասուած, զուցէ
տասը զանազան գէպքերում զանազան մասերով պիտք է լուսաբանէ՝ մինչև
ոը յօդուածի ամբողջ միտքը կարգով ասեցնել ատայ մա-
նուկներին: Ոչ միայն ամբողջ ուսոււմնաբանական կեանքը, այլ մի կանո-
նաւու կը նի զանազան մասերում պատմութեան ամենապարզ օրինակ-
ներով՝ առիթ պիտք է տան այդպիսի գաղափաներ կազմելու համար: Անք
յոյս ունինք շոտովկ մի այդպիսի դասագիրը հօստաբակիւ: (Ալգօթքներ ուսու-
ցանելն և տօների մասին տեղեկութիւն տալը անկըածեշտ կարեոր է, սա-
կայն ընտրութիւնը թղոնում ենք ուսուցչներ)

չի անում. ինչ որ ուրեմնն է, նորանեցի իլում—նա առեւ է, նա գող չէ, խաբեքայ, ստախօս չէ. եւթին ասում է նորան, թէ մըն է բարե և որը չար. (գու այդ զգացիկ ես):—Ոչ միայն մարդուն պէտք է կարեկից մինել, այլ առաջնորդութիւն ևս պէտք է խրդավ, առանց հարկից ըստ պէտք է սպառից նոցա: Մի տանջիր ճանճին, թռչունին. մի քանութեր ծիծեռնակի բոյնը. Անասունն էլ ցաւ է զգում, ինչպէս և դու:

61. Ով որ Աստծուն սիրում է, նա խօսում է նորա հետ, նա աղջուած է և լուսութիւն է խնդրում նորանից իւր մեզաց, համար: Այս անում է բարեպաշտը ամենայն օր, մանաւանդ պրոփ օրերին, այդ ժամանակ հանդստանում աշխատովթիւններից և, գնում է էլեցի, ուր պահպան նորան կանչում է: Տօն ական օրեր:

62. Մենք ամենքս ուրախ ենք, որ առաջ ենք. բայց կարող ենք մենք կամ մեր ծնողը կիւանդուն: Եթէ մայտ հիւանդ է, նա չի կարող աշխատել և խնամել քեզ, նա չի կարող ուտել խմել, նա թոյլ է և թշուառ: Այն ժամանակ դու վագում ես բժշկի մօտ, որ օգնէ (թնչպէս): Բայց նա միշտ օգնել չի կարող: Դարձիր ուրիշ բժշկին, երկնաց էն հօրդ, որ ողորմի մօրդ: Բայց վերջապէս ամենքս պէտք է տեսնեն, մենք մահկանացու ենք: Տեսել ես դու մի մեռանողին: Ով որ Աստծուն սիրում է, նա մահուանից յետոց կարժանանայ, որ Աստուած) նորան իւր մօտ պոնէ երկնքը: Աստուծոյ օրհնութեամբ մենք այժմ ուստումնարան ենք գնում, և սովորում ենք նորա պատուէրները, և մենք կարող ենք մտնել յաւիտենական հացը ական տունը, երկինքը, եթէ մենք այստեղ պարկեցտ ենք և ուզում ենք այդպէս միալ:

2013
5093

«Ազգային գրադարան»



NL0063194

